

ազգասիրութիւն, հանդերձ մեռուցումի և զոհողութեան հոգեով առանց որոշ անկարելի կ'ըլլայ տանիլ կեանքի դժուարութիւնները և զարգացնել ընտանիքն ու ընկերութիւնը:

Մայր Թերեզա Յովնանեան (Մկրտութեան անունով Հովհաննէ) ծնած է կարին 16 Յունիս 1875-ին, դուստր Պետրոս Յովնանեանի և Տիկ. Վառվառէի (ծնեալ ձէնկճեան):

Առաքինի ծնողաց և ի մասնաւորի եկեղեցաւէր մամուն աստուածապաշտ ու բարի զգացումները շուտով կը փթթին իր մանուկ սրտին մէջ: Կը յաճախէ կարնոյ Անարատ Յղութեան Բոյրերու վարժարանը: Սուրբերու վարքին ընթերցումը կ'արթնցնէ անոր մէջ Հովհաննէ-նեան, Սանդուխտներու, Թեկոյներու նմանելու տենչը և կ'որոշէ մարտիրոսութեան դասին: Կ'սկսէ հիւսել կրօնաւորական կեանքի բազմապիսի զոհողութիւններով:

Կ'ընդմանայ մեծ եղբայրն Յակոբ, այլ ի վերջոյ կը ստիպուի տեղի տալ մօրը կամքին, որ կը հաւանէր իր գտեր սուրբ բաղձանքին: Այս պէս դեռատին Հովհաննէ հետեւելով իր հօրաքրոջ օրինակին կը մտնէ Անարատ Յղութեան Միաբանութեան մէջ ի Կ. Պոլիս, 8 Գեկտ. 1893ին:

21 Նոյեմբեր 1895ին՝ նորընծայութեան սքեմին հետ կ'առնէ «Թերեզա» անունը և 9 Գեկտ. 1896ին Ս. Ուխտերով կը նուիրուի կրօնաւորական վիճակին:

Իր առաջին առաքելավայրը կ'ըլլայ Հալէպ 1897-1898 տարիներուն, ապա կ'անցնի Մարաշ 1898-1903, ուր կը թողու սրբութեան մեծ համբաւ: 1903ի Հոկտ.ին կը դառնայ Պոլիս, Բանկալթիի նորահաստատ վարժարանը, ուր մինչև 1909 թուականը կ'ունենայ շատ զործօն դեր մը դասաւանդութեան մէջ, անանուն վարելով նաեւ տեսչուհոյ պաշտօնը:

1909էն 1916 նէ եռանդուն առաքելուհին է իր իր բնիկ գաւառին: Տեղահանութեան սեւ օրերուն՝ ինքն ալ կը տեսնուի Միաբանութեան խոտովանող քոյրերու երամին մէջ: Ամենաբարին Աստուած կ'ողորմի սակայն կարնոյ Բոյրերուն և թոյլ կու տայ որ միանան անոնք Այստիական պաշտպանութեան տակ Պոլիս դարձող վիճակին: Միաբանութեան Հայրերու խումբին, այսպէս 45 օրուան տաժանելի և վտանգաւոր ճամբորդութենէ վերջ՝ կը հասնին Պոլիս 1916ի Յունուարին: Կ'անուանուի Տեսչուհի Բերայի մեծ վարժարանին (1916-1922), հուսկ

կը զրկուի Մեծաւորութիւն տիտղոսով Հալէպի վարժարանը. իր պաշտօնավարութեան շրջանին (1922-1928) կը ծաղկեցնէ, կ'ընդարձակէ ոչ միայն վարժարանը այլ նաեւ «Նախախնամութեան» որբանոցը. կը շարունակէ իր նախորդարկը՝ տարագրելոց օգնութեան գործին, մինչև իսկ կը գնէ ու կը փրկանաւորէ տաճիկներու ձեռքով ծախու հանուած հայ աղջիկներ, և կ'ապահովէ անոնց ապագան:

1928ին Հոռմ մը կանչուի ըլլալու խորհրդականուհի և վերակացու նորընծայից:

1933ին կ'ընտրուի Ա. խորհրդականուհի, պաշտօն՝ զոր կը վարէ մինչև իր երջանիկ մահուն օրը: Այցելուի պաշտօնով զացած է Պոլիս՝ 1934ին. Սիրիա, Լիբանան ու Եգիպտոս 1936ին, և Գաղղիա 1938ին: Գացած է նաեւ վիեննա՝ Մայր Բրաքիոն Քէչէճեանի հետ 1906ի արձակուրդի ամիսներուն, ձեռնարկելու համար հանգանակութեան մը՝ ի նպատակ Բանկալթիի վարժարանին:

Նոյեմբեր 5ի անակնկալ տխուր արկածը առաջին ազդն էր երկնային հրաւերին. ինկաւ նա սանդուխտէն և կոտրեց բարձուկը, փոխադրուեցաւ հիւանդանոց՝ ճառագայթի քննութեան ու բժշկական դարմանումի համար:

Անշարժ վիճակի մէջ մնալու դատապարտուած և տաժանելի ցաւերու մատնուած, սակայն Աստուծային Ս. կամքին համակամ էր միշտ և ժպտադէմ:

Յօժար էր հոգին՝ բայց մարմինը տկար. չտուկաց սիրտն այդ անշարժ դրութեան:

Խնդրեց և ընդունեցաւ Ս. Խորհուրդները մեծ շքեմեանութեամբ և 1946, 19 Նոյեմբերի երեկոյին՝ խաղաղ ու հանդարտ՝ թողուց արտասուած այս հովիտը և գնաց խառնուելու Ս. կուսանաց երամին՝ լուսեղէն կամարներու տակ երգելու իր Յիսնամեայի «Մեծացուցէ՛» ն:


Յիսուս տարի՛ անձնուէր ու անխոնջ աշխատած է իր Միաբանութեան հոգեւոր ու մտաւորական զարգացման համար:

Կը թողու անդամանելի խոր վէրք մը ոչ միայն միաբանակից քոյրերու սրտին մէջ, որոնք մեծ մասով իր ձեռնասունները, այլ նաեւ բոլոր այն ազգայիններու՝ որոնք ճանչցան ու գիտցան գնահատել զինքը իր կատարած դերին մէջ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

- ՄԱՐԱՇԻԱՆ ԱՐՄԷՆ. - Հայոց Պատմութիւն (հնագոյն դարերէն մինչև մեր օրերը) հատոր Բ. Հալէպ, 1946.
- ՏԻՐԱՅԵԱՆ ԱՐՏԱՇԷՍ. - Մէկ ամիս Հայաստանի մէջ (նուիրուած Սով. Հայաստանի փառապանծ 25-ամեակին). Պոլսէ, 1945.
- ԽՈՒԳԻՅԷՐ (ՊԵՏՐՈՍ ՏԵՐ-ՅՈՎԱԿԻՄԵԱՆ). - Հերթերը և անդամները. Թեհրան, 1946.
- ԱԵՏԻՍԵԱՆ ՕՆՆԻԿ. - Փորձ մը հայ ապագրական տառերու բարեփոխութեան և արդիականացման, Գահիրէ, 1946.
- ԱՐՏԱՆԱԶԻ ԱՐԳ. ՍԻՐՄԷԼԵԱՆ. - Գէպի Հայաստան (Յուշեր և Խոհեր). Պէյրութ, 1946.
- ԳԵՈՐԳ ԳԱԼ. ՆԵՋԱՄԵԱՆ. - Ժողովրդական Տարեցոյց, Բ. տարի 1947. Փարիզ.
- Ե. ԳԱՎԱԼՃԵԱՆ. - Անդին (քերթուածներ). Գահիրէ, 1946.
- ՍԻՄՈՆԵԱՆ Ա.ԼԵՆԻՆ. - Զայալաճ առ երգ երգոց (Գ. Ա.), Գիրք մէկ. Պէյրութ, 1946.
- ՍԻՄՈՆԵԱՆ Ա.ԼԵՆԻՆ. - Զայալաճ առ երգ երգոց (Գ. Ա.), Գիրք մէկ. Պէյրութ, 1946.
- Armenian National Council - Egypt. - The Farmanian Cause in the light of Historical facts and international treaties, Alexandria, 1946.


ԼՈՅՍ ՏԵՄԱԼ



Ա. Բ. Գ. Դ. ՏԱՐԻ
ՄԻԻԹԱՐԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՆՈՐԱԳՈՅՆ ընթերցարաններ պատրաստուած արեւմտահայ և արեւելահայ ընտիր հեղինակներու քաղաւածներով. հայ և արեւելահայ ընտիր հեղինակներ ընթերցումներով. պատկերազարդ, գիրքին և կրթական ընթերցումներով. յարմար մանուկին պահանջած զարգացումին և հոգեբա. նախնի ձեռնարկներով. իւրաքանչիւր ընթերցում ունի իր յատուկ բառադիտութիւնը և բացատրութիւնները:

(Ընդ մտնող՝ Ե. Զ. Է. տարի)






ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ



Կը խնդրուի բոլոր հայ գրի մշակներէն կամ հրատարակիչներէն, որ չմոռնան առաքել Ս. ՂԱԶՍՐՈՒ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ գէթ օրինակ մը իրենց հրատարակած գիրքերէն, պրակներէն, թերթերէն՝ եթէ կ'ուզեն ՄՇՏԱԿԱՆ ԿԵՐՊՈՎ իրենց բաժինն ունենալ ազգային ամենակարեւոր և խնամքով պահպանուած այս Մատենադարանին մէջ: Եթէ կը փափաքին գրախօսականով եւս պատուուած տեսնել իրենց գործը՝ հարկաւոր է որ առաքեն երկու օրինակ նոյն հրատարակութիւններէն, ուղղուած յատկապէս Բազմալեւի խմբագրութեան:



“ԲԱԶՄԱՎԷՊ”-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

- | | | |
|---------|---|---|
| ԵԳԻՊՏՈՍ | { | Հ. Քերորէ վ. Զրաքեան |
| | { | Հ. Աբրահամ Աղամեան, Մխիթ. վարժարան Աղեքսանդրիոյ,
18 Rue Station, Shutz. |
| ՀԱՍԷՊ | { | Հ. Եսայի Գոուզեան |
| | { | Հ. Աւետիք Ծովեան, Մխիթարեան վարժարան Հաղպի. |
| ՓԱՐԻՉ | - | Պր. Բարդէն Պոտտեան, 22 Rue Stendhal, Paris (20)
Բաժնեգիրնի վճարումը կատարել կամ Պր. Բարդէն Պոտտեանին և կամ Սերի Մուրատեան վարժարանի Մատակարարութեան. C. C. P. 555.84 |
| ԼՈՆՏՐՈՆ | - | Պր. Արշակ Սաֆրաստեան, 18 Eton Villas, London N. W. 3. |
| ՊՈՍԹՐՆ | - | Պր. Ենովք Լաչինեան, 268 Northampton St. Boston 18, Mass. |
| ՄԻԼԱՆ | - | Օր. Պերճուհի Պօլստեան, Viale Porta Vercellina 1, Milano. |